



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No 1137-Ա/Ք

«12» հոկտեմբերի 2011

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ԱՆՎՃԱՐ ՏՐՎՈՂ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրության 14-րդ կետի «դ» ենթակետով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված 09.06.01.«31.Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագիրը.

Հրամայում եմ՝

1. Պետական ուսումնական հաստատություններում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին անվճար տրվող դասագրքերի դիմաց փոխհատուցման ենթակա գումարների հաշվարկն իրականացնել 2011-2012 ուստարվա սկզբի դրությամբ սովորողների թվաքանակին՝ ըստ դասարանների և համապատասխան դասարանի դասագրքերի ամբողջական խմբաքանակի դիմաց ներդրվող գումարին համամասնորեն՝ ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով 09.06.01.«31.Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագրով նախատեսված 120,000.0 հազ.դրամի շրջանակներում:

2. <<Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամին>>
 - 1) սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել յուրաքանչյուր ուսումնական հաստատությանը վճարման ենթակա գումարների հաշվարկը և այն մինչև սույն թվականի հոկտեմբերի 30-ը ներկայացնել << ԿԳ նախարարություն (այսուհետ՝ նախարարություն),
 - 2) մշակել պետական հանրակրթական հաստատությունների և << ԿԳ նախարարության աշխատակազմի միջև կնքվելիք պայմանագրի օրինակելի ձևը, որով կսահմանվեն հանրակրթական հաստատություններում սովորող սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ընտրության և վերջիններիս անվճար դասագրքեր տրամադրելու պայմանները, և մինչև սույն թվականի նոյեմբերի 12-ը ներկայացնել նախարարություն՝ համաձայնեցման,
 - 3) համագործակցելով << մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի կրթության վարչությունների (բաժինների) հետ, սույն կետի 2) ենթակետում նշված պայմանագրերը ներկայացնել հանրակրթական հաստատությունների տնօրենների հաստատմանը և այնուհետ, պայմանագրերի մեկական օրինակ, ներկայացնել նախարարության ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն մինչև սույն թվականի դեկտեմբերի 6-ը,
 - 4) նախարարության ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել <<Էյչ Էս Բի Սի>> Բանկ Հայաստան ՓԲԸ-ում փոխհատուցում ստացող պետական ուսումնական հաստատությունների հաշվեհամարների և փոխանցման ենթակա փոխհատուցման գումարների վերաբերյալ տեղեկանք (թղթային և էլեկտրոնային տեսքով) մինչև սույն թվականի դեկտեմբերի 10-ը:
3. << ԿԳՆ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչությանը՝
ապահովել համապատասխան վճարումների կատարումը, հիմք ընդունելով <<Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամին>> կողմից կատարված հաշվարկը և հանրակրթական հաստատությունների հետ կնքված պայմանագրերը:
4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:



Ա. ԱՇՈՏՅԱՆ